

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 16

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

09.07.2018թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա.Խաչատրյանը - մարզպետի տեղակալ
- Ա.Ղուկասյանը - մարզպետի տեղակալ
- Ս.Սարուխանյանը - մարզպետի տեղակալ
- Ն.Սարգսյանը - աշխատակազմի ղեկավար
- Ա.Ջանազյանը, Հ.Մկրտչյանը, Ա.Բեջանյանը, - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Օր ա կ ա ր գ ու մ`

1. ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարի մոտ կայացած խորհրդակցության ժամանակ տրված հանձնարարականների մասին
/Հրանտ Մարգարյան/
2. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին
/Զեկ. Նարեկ Սարգսյան/
3. Համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման մասին
/ Զեկ. Արտավազ Բեջանյան/
- 4.2018 թվականի ամառային զորակոչի ընթացքի մասին
/ Զեկ. Սպարտակ Ղուբաթյան/
5. Գյուղատնտեսական աշխատանքների կատարման ընթացքի մասին
/ Զեկ. Գրիգոր Հակոբյան/
6. Այլ հարցեր

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա.Խաչատրյանին, Ա.Ղուկասյանին, Ս.Սարուխանյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ն.Սարգսյանին , ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ Հ.Պապոյանին՝

Անհրաժեշտ հնարավոր միջոցներ ձեռնարկել Լոռու մարզի 500 000 դրամից ավել հարկային պարտավորություններ ունեցող քաղաքացիների և իրավաբանական անձանց կողմից պարտավորությունները կատարելու ուղղությամբ և ներկայացնել տեղեկատվություն:

/Ժամկետ՝ մինչև 30.07.2018թ./

2. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Ա.Խաչատրյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գ. Հակոբյանին՝

Ուսումնասիրել և ներկայացնել տեղեկատվություն ու առաջարկություններ մարզի տարածքում ոչխարաբուծության զարգացման հեռանկարների և արտավայրերի օգտագործման վերաբերյալ:

3. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա.Խաչատրյանին, Ս.Սարուխանյանին՝

Անհրաժեշտ վերահսկողություն սահմանել մարզի համայնքներում ապօրինի հողազավթումների, ապօրինաշինության կանխարգելման ուղղությամբ, ինչպես նաև վերահսկել հողերի վարձակալության և օգտագործման տրամադրման օրինականացման ընթացքը:

 Invalid signature

X 

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ